



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

25 Տարբեր 2019 թ. № 50 - Ա/1
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի № 146-Ա/1
ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 3-րդ մասի, ինչպես նաև 34-րդ հոդվածի՝ *հրամայում եմ*.

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2013 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող երիտասարդական միջոցառումների անցկացման համար կատարվող ծախսերի չափերը հաստատելու մասին» № 146-Ա/1 հրամանի հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) 4-րդ, 5-րդ և 7-րդ կետերում «վարձավճար» բառից հետո լրացնել «մեկ ամսվա համար» բառերը,

2) 6-րդ կետի «Վարձավճարներ ծառայությունների համար» բառերը փոխարինել «Ծառայությունների վարձավճարներ մեկ ամսվա համար՝ բացառությամբ սույն կետի 8-րդ ենթակետի» բառերով:

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

26 ԿոչեՏիկ 2018 թ. № 185 - Ա/1
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի № 146-Ա/1
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ինից
3-րդ մասերի՝ հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի
նախարարի 2013 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական
բյուջեի միջոցների հաշվին իրականացվող երիտասարդական միջոցառումների
անցկացման համար կատարվող ծախսերի չափերը հաստատելու մասին» № 146-Ա/1
հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարի
2018 թվականի հոկտեմբերի 26-ի
N° 185-Ա/1 հրամանի

«Հավելված
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի
2013 թվականի հուլիսի 30-ի N° 146-Ա/1 հրամանի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ՉԱՓԵՐԸ**

Հ. հ.	Ծախսի անվանումը	Չափը արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով
1.	1) Մասնակցի սննդի ընդունման օրական չափ 2) Մասնակցի գիշերավարձի օրական չափ 3) Մասնակցի գիշերավարձի օրական չափ առանց ծախսերը հաստատող փաստաթղթի ա) Հայաստանի Հանրապետության մարզերում և Արցախի Հանրապետությունում կեցության օրական չափ բ) Երևան քաղաքում կեցության օրական չափ 3) Սուրճի ընդմիջում 4) Ֆուրջետ 5) Պաշտոնական ճաշկերույթ	ոչ ավել, քան 3.000 ոչ ավել, քան 5.000 ոչ ավել, քան 3.000 ոչ ավել, քան 15.000 ոչ ավել, քան 25.000 1.500 ոչ ավել, քան 2.000 ոչ ավել, քան 12.500
2.	Թարգմանչական ծառայություններ 1) համաժամանակյա թարգմանություն մեկ ժամվա համար 2) սովորական թարգմանություն	ոչ ավել, քան 22.000 ոչ ավել, քան 5.000
3.	Հուշանվեր՝ 1) Պատվիրակության ղեկավարի համար	ոչ ավել, քան 20.000

	2) Մեկ մասնակցի համար	ոչ ավել, քան 10.000
4.	Ծրագրի ղեկավարի և/կամ խորհրդատուի վարձավճար	ոչ ավել, քան 132.000 ՀՀ դրամ
5.	Ծրագրի համակարգողի վարձավճար	ոչ ավել, քան 140.000 ՀՀ դրամ
6.	Վարձավճարներ ծառայությունների համար՝ 1) Ծրագրի հաշվապահ 2) կայքի ադմինիստրատոր 3) խմբագիր/սրբագրիչ 4) ծրագրավորող 5) լրագրող 6) լուսա/տեսանկարահանող 7) այլ սպասարկող անձնակազմ 8) հանձնաժողովի (ժյուրիի) անդամ	ոչ ավել, քան 120.000 ոչ ավել, քան 160.000 ոչ ավել, քան 110.000 ոչ ավել, քան 150.000 ոչ ավել, քան 100.000 ոչ ավել, քան 100.000 ոչ ավել, քան 80.000 ոչ ավել, քան 5.000 1 օրվա համար
7.	Ծրագրի փորձագետի վարձավճար	ոչ ավել, քան 150.000
8.	Դասընթացավարի վարձավճար՝ մեկ ժամվա համար	2400-3500
9.	Երիտասարդական քաղաքականության ոլորտում լավագույնս դրսևորած երիտասարդներին և/կամ երիտասարդական հասարակական կազմակերպություններին պարգևատրում՝ մրցանակներ և/կամ դրամական խրախուսումներ	մրցանակներ՝ ոչ ավել, քան 50.000 ՀՀ դրամ դրամական խրախուսումներ՝ ոչ ավել, քան 500.000 ՀՀ դրամ

*Սույն հավելվածում ներառված դրամային միավորները ներառում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Վ. ԷԼՈՅԱՆ